Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Բ. Մակիչյան
«» հոկտեմբերի 2016 թ.

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի «21» -ի որոշմամբ (արձ. №18)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

2. Գիտական խորհուրդը գործում է ռեկտորի նախագահությամբ: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 4 անգամ:

3. Գիտական խորհուրդը ձևավորվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների (ուսանողներ, ասպիրանտներ) և մասնակիցների ներկայացուցիչներից:

4. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, մասնաճյուղերի, դեպարտամենտների, ֆակուլտետների ղեկավարները, ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներ են, որոնց առաջադրում է համալսարանի ուսանողական խորհուրդը:

5. Համալսարանի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է նրա անդամների կեսից ավելին (50% +1), իսկ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բացի գիտական կոչումների շնորհման մասին հարցերից, որոնք քննարկվում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ, իսկ որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ:

6. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների 1/3 պահանջով:

7. Գիտական խորհրդի կազմը հաստատում է ռեկտորը:

8.Գիտական խորհուրդը՝
1) հաստատում է իր կանոնակարգը.
2) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը.
3) քննարկում է ուսումնական պրոցեսի կազմակերպման բարելավման և նրա արդյունավետության բարձրացման հետ կապված կարևոր հարցեր.

4) քննության է առնում և հաստատում համալսարանի հեռանկարային զարգացման պլանները.
5) հաստատում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում օրինակելի), ինչպես նաև համալսարանի ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական փաստաթղթեր.
6) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ընտրությունների ընթացակարգերը.
7) ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է օրենքով սահմանված կարգով համալսարանում ստեղծել նոր ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև վերակազմակերպել կամ լուծարել դրանք:
8) սահմանված կարգով ընտրում է ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին.
9) քննության է առնում և հաստատում ուսումնական, գիտահետազոտական և գաղափարադաստիարակչական աշխատանքի ընթացիկ և հեռանկարային պլանները.
10) միջոցառումներ է մշակում ուսանողների ֆիզիկական դաստիարակության և նրանց առողջության բարելավման ուղղությամբ.
11) քննարկում է ուսումնական աշխատանքի, ուսանողների ուսումնական, արտադրական, եզրափակիչ պրակտիկայի արդյունքները և առաջարկություններ է մշակում դրանց բարելավման ուղղությամբ.
12) ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ուսման վարձի չափը.
13) մշակում ու իրականացնում է միջոցառումներ՝ ուղղված համալսարանի ուսումնանյութական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը.
14) լսում է ֆակուլտետների, ամբիոնների և համալսարանական մյուս ստորաբաժանումների ղեկավարների հաղորդումներ ու հաշվետվություններ ուսումնական և գաղափարադաստիարակչական աշխատանքների վիճակը և դրանց բարելավման միջոցառումների մասին.
15) քննարկում է համալսարանի գիտահետազոտական աշխատանքների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավարի և ամբիոնների վարիչների հաղորդումները բուհում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.
16) լսում է ֆակուլտետների դեկանների և համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ղեկավարի հաղորդումները շրջանավարտների հետ կապերի մասին և միջոցառումներ է մշակում մասնագետների պատրաստման գործի հետագա բարելավման ուղղությամբ.
17) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.
18) շնորհում է պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատմանը, ընդունում է պատվավոր կոչումներ, «Համալսարանի լավագույն բարեկամ» կոչում շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ սահմանելու, համալսարանի հուշամեդալով պարգևատրելու մասին որոշումներ.
19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ և համալսարանի ներքին այլ կանոնակարգերով սահմանված ուրիշ լիազորություններ.

9. Համալսարանի գիտական խորհուրդը ունի գիտական քարտուղար, որն ընտրվում է գիտական խորհրդի կողմից:

10. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են գիտական քարտուղարի կողմից:

11. Գիտական խորհրդի նիստերի արձանագրություններն ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

Հյուսիսային համալսարանի
գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի
և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն

«21» սեպտեմբերի 2016թ.